

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2016 թվականի

թիվ 12

քաղ. Մոսկվա

Միջլաբորատոր համեմատական փորձարկումների (միջլաբորատոր բաղդատումների) անցկացման կազմակերպման կարգը հաստատելու մասին

«Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականությունն անցկացնելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) 9-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 14-րդ կետին համապատասխան, ինչպես նաեւ «Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման աշխատանքների արդյունքները ճանաչելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 11 հավելված)՝ միջլաբորատոր համեմատական փորձարկումների (միջլաբորատոր բաղդատումների) ապահովման եւ անցկացման կազմակերպման մասով 3-րդ կետի իրագործման նպատակով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող «Միջլաբորատոր համեմատական փորձարկումների (միջլաբորատոր բաղդատումների) անցկացման

կազմակերպման կարգը»:

Սահմանել, որ նշված Կարգը չի տարածվում Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) ներառման հետ կապված հարաբերությունների վրա՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 319 որոշմամբ հաստատված «Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) ներառման, ինչպես նաեւ միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման կարգի մասին» հիմնադրությին համապատասխան:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 1 տարին լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

Վ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունվարի 26-ի
թիվ 12 որոշմամբ

ԿԱՐԳ

միջլաբորատոր համեմատական փորձարկումների (միջլաբորատոր բաղդատումների) անցկացման կազմակերպման

1. Սույն Կարգը մշակված է «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) 9-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան, միջլաբորատոր համեմատական փորձարկումների (միջլաբորատոր բաղդատումների) ապահովման եւ անցկացման կազմակերպման մասով «Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման աշխատանքների արդյունքները ճանաչելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 11 հավելված) 3-րդ կետի իրագործման նպատակով եւ սահմանում է միջլաբորատոր համեմատական փորձարկումների (միջլաբորատոր բաղդատման փորձարկումների, միջլաբորատոր բաղդատումների) անցկացման կազմակերպմանը ներկայացվող պահանջներ՝ Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերին (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգեր) արտադրանքի համապատասխանության գնահատման աշխատանքներ կատարող եւ Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում

ներառված հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) (այսուհետ՝ փորձարկման լաբորատորիաներ) որակավորումը ստուգելու նպատակով:

2. Սույն Կարգի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

փորձարկման լաբորատորիաների որակավորումը ստուգելու նպատակով միջլաբորատոր համեմատական փորձարկումներ (միջլաբորատոր բաղդատական փորձարկումներ, միջլաբորատոր բաղդատումներ)՝ մի քանի փորձարկման լաբորատորիաներում միեւնույն կամ մի քանի նմանատիպ նմուշների (այսուհետ՝ որակավորման ստուգման նմուշներ) չափումների (փորձարկումների) կազմակերպում, կատարում եւ գնահատում՝ այդ լաբորատորիաների գործունեության բնութագրերը գնահատելու միջոցով.

որակավորման ստուգման պրովայդեր՝ կազմակերպություն, որը պատասխանատվություն է կրում որակավորման ստուգման ծրագրերի մշակման եւ անցկացման բոլոր խնդիրների համար:

Այլ հասկացություններ օգտագործվում են «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) սահմանված իմաստներով:

3. Փորձարկման լաբորատորիաների որակավորումը ստուգելու նպատակով միջլաբորատոր համեմատական փորձարկումները (միջլաբորատոր բաղդատական փորձարկումները, միջլաբորատոր բաղդատումները) կատարվում են այդպիսի լաբորատորիաների որակավորման ստուգման ծրագրերի մշակման եւ անցակացման միջոցով (այսուհետ՝ որակավորման ստուգման ծրագրեր):

4. Որակավորման ստուգման ծրագրերը մշակվում եւ իրականացվում են որակավորման ստուգման պրովայդերների (միջլաբորատոր համեմատական

փորձարկումների (միջլաբորատոր բաղդատման փորձարկումների, միջլաբորատոր բաղդատումների) պրովայդերների) կողմից, որոնք լիազորվել կամ հավատարմագրվել են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետություններ, պրովայդերներ) օրենսդրությամբ սահմանված կարգով:

Անդամ պետությունների պրովայդերների կողմից մշակվող որակավորման ստուգման ծրագրերի բացակայության դեպքում թույլատրվում է փորձարկման լաբորատորիաների մասնակցությունը երրորդ երկրներում կոմպետենտ ճանաչված պրովայդերների կողմից մշակվող որակավորման ստուգման ծրագրերում:

5. Որակավորման ստուգման ծրագրերի իրականացման գործունեության մասնակիցներ են՝

ա) անդամ պետությունների այն մարմինները, որոնք լիազորված են իրականացնելու համապատասխան գործունեություն (այսուհետ՝ լիազորված մարմիններ),

բ) պրովայդերները,

գ) փորձարկման լաբորատորիաները:

6. Լիազորված մարմիններն իրականացնում են հետևյալ գործառույթները՝

ա) որակավորման ստուգման ծրագրերի կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ձեւավորում.

բ) որակավորման ստուգման ծրագրերի իրականացման գիտամեթոդական ապահովման կազմակերպում.

գ) անդամ պետություններում որակավորման ստուգման ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգում.

դ) որակավորման ստուգման ծրագրերի իրագործման արդյունքների վերլուծություն.

ե) որակավորման ստուգման նոր ծրագրերի կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ձեւավորում.

զ) որակավորման ստուգման ծրագրերի իրագործման արդյունքներով ամփոփ տեղեկատվության ձեւավորում եւ տարին մեկ անգամ անդամ պետության հավատարմագրման մարմին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) այն ներկայացնելը.

է) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված այլ գործառույթներ:

7. Որակավորման ստուգման ծրագրերի գիտամեթոդական ապահովման կազմակերպումը կարող է իրականացվել անդամ պետության կողմից որոշվող չափագիտական ինստիտուտի կողմից: Ընդ որում, թույլատրվում է չափագիտական ինստիտուտի՝ որակավորման ստուգման ծրագրերի իրականացման գիտամեթոդական ապահովման գործառույթների եւ պրովայդերի գործառույթների համատեղում (նշված գործունեությունն իրականացնող ինստիտուտի անձնակազմի շահերի բախման առաջացման հնարավորությունը բացառելու պայմանով):

8. Պրովայդերների կոմպետենտությանը, որակավորման ստուգման ծրագրերի մշակմանը եւ իրականացմանը ներկայացվող պահանջներն անդամ պետությունում սահմանվում են ԳՕՍՏ ԻՍՕ/ՄԷՀ 17043 «Համապատասխանության գնահատում. Որակավորման ստուգման անցկացմանը ներկայացվող հիմնական պահանջներ» միջպետական ստանդարտին համապատասխան:

9. Պրովայդերը՝

ա) կարող է փորձարկման իր բազան օգտագործել չափումների (փորձարկումների) համապատասխան ոլորտում եւ (կամ) աշխատանքների կատարման համար ներգրավել անհրաժեշտ փորձարկման բազա ունեցող կողմնակի կազմակերպություններ՝ անդամ պետության օրենսդրության համապատասխան ենթակապալի պայմաններով,

բ) հաստիքացուցակում պետք է ունենա տեխնիկական փորձագետներ (մասնագետներ) եւ (կամ) պայմանագրային հիմունքներով ներգրավի կողմնակի կազմակերպությունների համապատասխան տեխնիկական փորձագետների:

10. Որակավորման ստուգման ծրագրեր մշակելիս դրանցում նախատեսվում է չափումների (փորձարկումների) իրականացում՝ ըստ տեխնիկական կանոնակարգերով սահմանված ցուցանիշների:

11. Յուրաքանչյուր տարի պրովայդերները մշակում են որակավորման ստուգման ծրագրեր եւ դրանց ցանկերը ներկայացնում իրենց պետության լիազորված մարմին:

12. Պրովայդերներից ստացված ցանկերի հիման վրա լիազորված մարմինը յուրաքանչյուր տարի ձեւավորում է որակավորման ստուգման ծրագրերի ամփոփ ցանկ՝ նշելով հետեւյալ տեղեկությունները՝

ա) տեխնիկական կանոնակարգի անվանումը եւ համարը.

բ) պրովայդերի ամբողջական անվանումը, նրա գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը, ֆաքսի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), պատասխանատու անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում).

գ) որակավորման ստուգման ծրագրի օբյեկտը.

դ) որոշվող բնութագրի (բնութագրերի) անվանումը.

ե) աշխատանքների կատարման ժամկետները.

զ) հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մեթոդը (անհրաժեշտության դեպքում).

է) ենթակապալի պայմաններով իրականացվող գործունեության տեսակները.

ը) լաբորատորիայի որակավորման գնահատման չափանիշները:

13. Լիազորված մարմնի կողմից ձեւավորված որակավորման ստուգման ծրագրերի ամփոփ ցանկը ներկայացվում է Հանձնաժողով եւ տեղադրվում Ինտերնետ տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում (այսուհետ համապատասխանաբար՝ Ինտերնետ ցանց, Միության պաշտոնական կայք):

14. Որակավորման ստուգման ծրագրերին մասնակցող փորձարկման լաբորատորիաները կատարում են չափումներ (փորձարկումներ)՝ օգտագործելով Հանձնաժողովի կողմից հաստատված միջազգային եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների ցանկերում պարունակվող հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մեթոդները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտները, որոնք պարունակում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ, որոնք անհրաժեշտ են տեխնիկական կանոնակարգի կիրառման եւ պահանջների կատարման, ինչպես նաեւ արտադրանքի համապատասխանության գնահատման համար:

15. Փորձարկման լաբորատորիաները որակավորման ստուգման ծրագրերն ընտրում են որակավորման ստուգման ծրագրերի ամփոփ ցանկից՝ իրենց հավատարմագրման բնագավառին համապատասխան:

16. Պրովայդերները որակավորման ստուգման ծրագրերն իրականացնում են սահմանված ժամկետներում:

17. Որակավորման ստուգման ծրագրերը պրովայդերների կողմից իրականացվում են պայմանագրային հիմունքներով:

18. Որակավորման ստուգման ծրագրի իրականացման արդյունքներով պրովայդերը՝

ա) փորձարկման լաբորատորիային տրամադրում է եզրակացություն (նշելով փորձարկման լաբորատորիայի գործունեության բնութագրերը) եւ համապատասխան հաշվետվություն.

բ) ամփոփ հաշվետվություն է ներկայացնում լիազորված մարմին:

19. Որակավորման ստուգման ծրագրի մասին ամփոփ հաշվետվությունը պարունակում է՝

ա) որակավորման ստուգման ծրագրի համարը (շիֆրը).

բ) որակավորման ստուգման ծրագրի իրականացման ժամկետները.

գ) որակավորման ստուգման ծրագրի օբյեկտը.

դ) որակավորման ստուգման համար նմուշի տեսակը.

ե) որոշվող բնութագրի (բնութագրերի) անվանումը.

զ) հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների օգտագործվող մեթոդները.

է) մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները (յուրաքանչյուր անդամ պետությունից մասնակիցների թիվը, անհրաժեշտության դեպքում՝ գերատեսչական պատկանելիությունը).

ը) որակավորման ստուգման ծրագրի կատարման արդյունքների ամփոփ գնահատականը (այն արդյունքների տոկոսային արժեքը, որոնք որոշակի գնահատական են ստացել որակավորման ստուգման ծրագրի կատարման՝ պրովայդերի կողմից ընտրված գնահատման չափորոշիչով պայմանավորված):

20. Որակավորման ստուգման կատարված ծրագրերի արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունները լիազորված մարմինների կողմից ներկայացվում են Հանձնաժողով՝ Միության պաշտոնակալական կայքում տեղադրելու համար:

21. Որակավորման ստուգման ծրագրերի կատարումը կարող է իրականացվել 2 սխեմայով.

ա) սխեմա՝ առանց այլ պրովայդերների ներգրավման՝

պրովայդերը նախաձեռնում է որակավորման ստուգման ծրագրերի ցանկում ընդգրկված որակավորման ստուգման ծրագրի իրականացումը՝ Ինտերնետ ցանցում պրովայդերի կայքում համապատասխան տեղեկատվություն տեղադրելու միջոցով.

պրովայդերն իրականացնում է որակավորման ստուգման ծրագիր՝ սահմանված ընթացակարգերին համապատասխան.

պրովայդերը լիազորված մարմինն իրականացրած որակավորման ստուգման ծրագրի արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է այն ավարտվելուց հետո.

բ) սխեմա՝ այլ պրովայդերների ներգրավմամբ (այսուհետ՝ համակատարող պրովայդերներ)

պրովայդերը նախաձեռնում է որակավորման ստուգման ծրագրերի ցանկում ընդգրկված որակավորման ստուգման ծրագրի իրականացումը՝ Ինտերնետ ցանցում պրովայդերի կայքում համապատասխան տեղեկատվություն տեղադրելու միջոցով (այսուհետ՝ նախաձեռնող պրովայդեր).

լիազորված մարմինն իր անդամ պետությունում որոշում է համակատարող պրովայդերներին, որոնք կարող են ապահովել որակավորման ստուգման համար նմուշի տեղափոխումն իրենց տարածաշրջաններում.

նախաձեռնող պրովայդերը եւ համակատարող պրովայդերները կնքում են որակավորման ստուգման ծրագրի իրականացման վերաբերյալ պայմանագրեր.

պրովայդերը լիազորված մարմինն տեղեկացնում է որակավորման ստուգման իրականացրած ծրագրի արդյունքների վերաբերյալ այն ավարտվելուց հետո:

Որակավորման ստուգման ծրագրերը համակատարող պրովայդերների կողմից իրականացվում են նախաձեռնող պրովայդերի հետ համաձայնեցված ընթացակարգերով, ինչի արդյունքում ձեւավորվում են տվյալների մի քանի զանգվածներ, որոնք նախնական ստուգումից հետո փոխանցվում են նախաձեռնող պրովայդերին,

տվյալների ընդհանուր զանգվածը մշակվում է նախաձեռնող պրովայդերի կողմից,

որակավորման ստուգման իրականացված ծրագրի վերաբերյալ հաշվետվությունն այդ ծրագիրն իրականացրած բոլոր պրովայդերների ընդհանուր մտավոր սեփականությունն է: